ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԳԴ-ԳՀԾՁԲ-20/5-1

ք. Երևան «12» օգոստոսի 2020թ.

ՀՀ դատախազությունն ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Նավասարդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արգիշտի Մկրտչյան Ասատուրի Ա/Ձ-ն, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սարքերի և սարքավորումների սպասարկման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Արգիշտի Մկրտչյան Ասատուրի Ա/Ձ
ք. Երևան, Գրիբոյեդով 44
«Ինեկոբանկ» ՓԲԸ
2050632005181002
ՀՎՀՀ 37438669

------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«12» օգոստոսի 2020թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԾՁԲ-20/5-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50311100/3 | **Սարքերի և սարքավորումների սպասարկում**<br><br>**տեխնիկական բնութագիրը՝ համապատասխան տեխնիկական բնութագիր-գնացուցակին:** | դրամ | 2000000 | 1 | ք.Երևան, Վ. Սարգսյան 5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2020թ: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
Արգիշտի Մկրտչյան Ասատուրի Ա/Ձ
ք. Երևան, Գրիբոյեդով 44
«Ինեկոբանկ» ՓԲԸ
2050632005181002
ՀՎՀՀ 37438669

/ստորագրություն/
Կ.Տ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆԱՑՈՒՑԱԿ*

| | Չափաբաժին 1 - Համակարգչային տեխնիկայի սպասարկում | Ընդամենը՝ 580000 դրամ՝ |
|---|---|---|
| | **Core 2 Duo/DualCore Q8400/Core i5/Core 2 Quad/Dell Optiplex/Fujitsu/G 2020/Pentium IV/core I3 /Dell Vostro Desktop,Core i3/HP 200 G3/ Lenovo V520/HP 280 G1 / Համակարգչի կամ համարժեք համակարգիչների սպասարկում** | |
| 1. | Պրոֆիլակտիկա , դիագնոստիկա ( փոշիների մաքրում, պրոցեսորի, հրանի, վիդեոքարտի հովացուցիչների մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում) | 1747 |
| 2. | Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում (Windows XP,7,8,8.1,10 MS Office, Acrobat reader, Fonts arm/rus, Antivirus) Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop,COREL DRAW,PROMT, LINGVO), Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգավորում (AUTOCAD, ARCHICAD), Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում, վիրուսազերծում, հակավիրուսի տեղադրում | 2912 |
| 3. | CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը LGA 478/775/1050/1150/1155/B75/1155 կամ համարժեքը | 2620 |
| 4. | Մայրական սալասալի նորոգում ներառյալ պահեստամասերը | 3494 |
| 5. | Մայրական սալասալի փոխարինում ներառյալ LGA 478/775/945/G31/G41/H61/H81/H110/ 1150/1155/B75/1156 սալասալը, կամ համարժեքը | 17470 |
| 6. | CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 478 2GHz, 3.0GHz, LGA 775 3.0GHz, 3.2GHz. Core 2 Duo E7300, Core 2 Duo E7400,Core 2 Duo E7500, Coer 2 Duo E8300, Coer 2 Duo E8500, Core 2 Quad Q9500 | 10482 |
| 7. | CPU փոխարինում ներառյալ ինտել Core i3/i5/i7 համապատասխան պրոցեսորով | 20382 |
| 8. | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՀՑ (DDR2 1GB 667/800MHZ) | 4659 |
| 9. | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՀՑ (DDR2 2GB 667/800MHZ) | 4950 |
| 10. | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1066/1333ՀՑ (DDR3 2GB 1066/1333MHZ) | 5241 |
| 11. | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4096Մ 1066/1333ՀՑ (DDR3 4GB 1066/1333MHZ) | 8153 |
| 12. | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 8192Մ 1066/1333ՀՑ(DDR3 8GB 1066/1333MHZ) | 11647 |
| 13. | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 4096Մ 2400ՀՑ(DDR4 4GB 2400MHZ) | 9900 |
| 14. | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 8192Մ 2400ՀՑ(DDR4 8GB 2400MHZ) | 13394 |
| 15. | SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն/Նվիդիա ԴԴՌ3 2Գբ ՊիԿիԱյ-էքսպ(nvidia, Ati Redeon/Nvidia DDR3 2Gb PCI Exp 128bit) կամ համարժեք | 17470 |
| 16. | HDD փոխարինում ներառյալ HDD 1SP,7200պտ/մ, SATA3 | 15141 |
| 17. | HDD փոխարինում ներառյալ HDD 2SP,7200պտ/մ, SATA3 | 20382 |
| 18. | SSD փոխարինում ներառյալ SSD 120Գբ,515MB/s/ up to 490MB/s | 14558 |
| 19. | SSD փոխարինում ներառյալ SSD 240Գբ,535MB/s/ up to 500MB/s | 17470 |
| 20. | CD-RW/DVD-RW-ի փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(CD-RW/DVD-RW),կամ համարժեք | 4659 |
| 21. | Սնուցման բլոկի նորոգում (վնասված կոնդենսատորների, միկրոսխեմաների, հովացուցիչի և այլ պահեստամասերի փոխարինում) նորով | 2329 |
| 22. | Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm, 450W) ներառյալ սնուցման բլոկը | 4659 |
| 23. | Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 550W) ներառյալ սնուցման բլոկը | 5532 |
| 24. | Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 650W) ներառյալ սնուցման բլոկը | 7570 |
| 25. | Ցանցային քարտի տեղադրում PCI կամ PCI-e 10/100/1000 Mbps ներառյալ ցանցային քարտը, Lan Card PCI կամ PCI-e | 4076 |
| | **HP Probook 450 G3 i5/ HP Probook 4530s Դյուրակիր Համակարգչի** | |
| 26. | Պրոֆիլակտիկա, դիագնոստիկա ( փոշիների մաքրում, պրոցեսորի, հրանի, վիդեոքարտի հովացուցիչի մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում,( փոշիների մաքրում, պրոցեսորի, հրանի, վիդեոքարտի հովացուցիչի մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում) | 5823 |
| 27. | Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում (Windows XP,7,8,8.1,10 MS Office, Acrobat reader, Fonts arm/rus, Antivirus) Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop,COREL DRAW,PROMT, LINGVO), Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգավորում (AUTOCAD, ARCHICAD), Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում, վիրուսազերծում, հակավիրուսի տեղադրում | 2912 |
| 28. | HDD փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 500գբ 7200պտ/մ նոթբուքի համար(TOSHIBA 500GB 7200RPM for notbook) կամ համարժեք | 14558 |
| 29. | HDD փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 1000գբ 7200պտ/մ նոթբուքի համար(TOSHIBA 1000GB 7200RPM for notbook) կամ համարժեք | 16305 |
| 30. | SSD փոխարինում ներառյալ SSD 120Գբ,515MB/s/ up to 490MB/s | 17470 |

| | | |
|---|---|---|
| 31. | SSD փոխարինում ներառյալ SSD 240Գբ,535MB/s/ up to 500MB/s | 20382 |
| 32. | Ram-ի փոխարինում ԴԴՌ2 2գբ (DDR2 2GB) ներառյալ Ram-ը | 4076 |
| 33. | Ram-ի փոխարինում ԴԴՌ3 2գբ (DDR3 2GB) ներառյալ Ram-ը | 5532 |
| 34. | Ram-ի փոխարինում ԴԴՌ3 4գբ (DDR3 4GB) ներառյալ Ram-ը | 7279 |
| 35. | Ram-ի փոխարինում ԴԴՌ4 4գբ (DDR4 4GB) ներառյալ Ram-ը | 7570 |
| 36. | Մոնիտորի փոխարինում ( ներառյալ մոնիտորը 15.6" LED, 15.6 LED Slim, 15.6 LED Full HD 17.3 LED | 18635 |
| 37. | Նոթբուքի մայրական պլատայի վերանորոգում ( վնասված միկրոսխեմաների, չիպերի, բնիկի, և պահեստամասերի փոխարինում) չվերանորոգման դեպքում մայրական պլատայի փոխարինում ներառյալ պլատան | 10482 |
| 38. | Նոթբուքի ստեղնաշարի փոխարինում նորով համապատասխան ստեղնաշարով | 7570 |
| 39. | Նոթբուքի սնուցման բլոկի փոխարինում նորով համապատասխան բլոկով | 5823 |
| 40. | Նոթբուքի մարտկոցի փոխարինում նորով համապատասխան մարտկոցով | 12811 |
| | **Dell T440/ Fujitsu 200/Fujitsu 410/CPU HP E3/ Սերվերի կամ համարժեք սերվերների** | |
| 41. | Պրոֆիլակտիկա , դիագնոստիկա ( փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչների մաքրում և յուղում, թերմոմածուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում) | 4659 |
| 42. | CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը | 6988 |
| 43. | Մայրական պլատայի նորոգում ներառյալ պահեստամասերը | 8735 |
| 44. | Մայրական պլատայի փոխարինում ներառյալ պլատան | 52410 |
| 45. | Ինֆորմացիայի վերականգնում | 14558 |
| 46. | RAID-ի վերականգնում | 5823 |
| 47. | Սնուցման բլոկի նորոգում (վնասված կոնդենսատորների, միկրոսխեմաների, հովացուցիչի և այլ պահեստամասերի փոխարինում) նորով | 5532 |
| 48. | Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը | 17470 |
| | **Lenovo/LG/Samsung/Asus/Dell/HP/LOC/MachMet/ViewSonic/LCD-LED-CRT/15"-24" Մոնիտորի կամ համարժեք մոնիտորների** | |
| 49. | Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 17" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական պլատա կամ անհրաժեշտ այլ պահեստամաս) | 5823 |
| 50. | Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 19"-20" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական պլատա կամ անհրաժեշտ այլ պահեստամաս) | 9317 |
| 51. | Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 20"-23" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական պլատա կամ անհրաժեշտ այլ պահեստամաս) | 13394 |
| | **PowerCom/Mercuri/APC-Smart/Անխափան սնուցման սարքի կամ համարժեք անխափան սնուցման սարքերի** | |
| 52. | Վերանորոգում ( ներառյալ վնասված պահեստամասերը, պլատա, տրանզիստոր, միկրոսխեմա, տրանսֆորմատոր և այլ պահեստամասեր) | 5241 |
| 53. | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/4,5Ա | 4659 |
| 54. | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/7Ա | 5823 |
| 55. | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/9Ա | 7861 |
| 56. | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/12Ա | 9317 |
| 57. | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/18Ա | 14267 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Արգիշտի Մկրտչյան Ասատուրի Ա/Ձ
ք. Երևան, Գրիբոյեդով 44
«Ինեկոբանկ» ՓԲԸ
2050632005181002
ՀՎՀՀ 37438669

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«12» օգոստոսի 2020թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԾՁԲ-20/5-1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311100/3 | Համակարգչային տեխնիկայի սպասարկում | 1000.0 | 1000.0 | 2000.0 | 2000.0 | 2000.0 | 2000.0 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

_______________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
Արգիշտի Մկրտչյան Ասատուրի Ա/Ձ
ք. Երևան, Գրիբոյեդով 44
«Ինեկոբանկ» ՓԲԸ
2050632005181002
ՀՎՀՀ 37438669

_______________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«12» օգոստոսի 2020թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԾՁԲ-20/5-1 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20    թ.*

*Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝*

______________________________________________________________

*Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.*
*Պայմանագրի համարը՝ _________*
*Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «            » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

*Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:*

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«12» օգոստոսի 2020թ. կնքված*
*N ՀԳԴ-ԳՀԾՁԲ-20/5-1 ծածկագրով պայմանագրի*

*ԱԿՏ N*
*պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ*

*Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի*
*Պատվիրատուի անունը* *Կատարողի անունը*

*(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ___________________*
*պայմանագրի կնքման ամսաթիվը* *պայմանագրի համարը*

*գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.*

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

*Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:*

*ԿՈՂՄԵՐԸ*

**Հանձնեց**

______________________
*ազգանուն, անուն*

______________________
*ստորագրություն*

**Ընդունեց**
*հայտը նախագծած ներկայացուցիչ՝*

______________________
*ազգանուն, անուն*

______________________
*ստորագրություն*